

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 6-րդ ԴԱՍԱՐԱՆ  
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼ 2022-2023 ուստարի

Տևողությունը – 150 րոպե

1. Երբ մեքենան անցավ ճանապարհի 35%-ը, պարզվեց, որ մնացած ճանապարհը 42 կմ-ով ավելի է անցածից: Գտնել ճանապարհի երկարությունը:

- 1) 105 կմ                      2) 125 կմ                      3) 140 կմ                      4) 150 կմ

2. Թիվը իր  $\frac{1}{3}$  մասից մեծ է 30-ով: Որքանո՞վ է այդ թիվը մեծ իր  $\frac{2}{5}$  մասից:

- 1) 24                              2) 27                              3) 32                              4) 36

3. 382, 190, 94, 46, ..., ..., թվերը գրված են որոշակի օրինաչափությամբ: Գտնել 46-ից հետո գրված հաջորդ երկու թվերի գումարը:

- 1) 28                              2) 30                              3) 32                              4) այլ պատասխան

4. Բազմաանդամը  $2x^2 - 3x + 4$  ունի մեկ մուտք, իսկ յուրաքանչյուր հարկում կա չորս բնական: Գտնել այդ շեմքի 19-րդ հարկի բնականների համարների գումարը:

- 1) 298                              2) 306                              3) 314                              4) այլ պատասխան

5. Դաշտում կովեր են արածում: Դրանց ոտքերի և գլուխների տարբերությունը 45-ից շատ է, իսկ 50-ից քիչ: Քանի՞ կով է արածում դաշտում:

- 1) 12                              2) 16                              3) 18                              4) հնարավոր չէ որոշել

6. Ամիսներից մեկում կար 5 հինգշաբթի օր: Սակայն ամսվա առաջին և վերջին օրերը հինգշաբթի չէին: Շաբաթվա ի՞նչ օր էր այդ ամսվա 21-ը:

- 1) երկուշաբթի                      2) երեքշաբթի                      3) չորեքշաբթի                      4) հինգշաբթի

7. Արամը գտել է 2022-ից մեծ այն ամենափոքր թիվը, որը ունի երեք կրկնվող թվանշան: Նարեկը գտել է 2022-ից փոքր այն ամենամեծ թիվը, որը նույնպես ունի երեք կրկնվող: Ինչքանո՞վ է Արամի գտած թիվը մեծ Նարեկի գտած թվից:

- 1) 100                              2) 111                              3) 112                              4) այլ պատասխան

8. Քառանիշ թիվը սկսվում է 3 թվանշանով: Եթե այդ թվանշանը տեղափոխեն թվի վերջը, թիվը 3114-ով կմեծանա: Գտնել սկզբնական թվի թվանշանների գումարը:

- 1) 25                              2) 26                              3) 27                              4) 28

9. Քանի՞ եռանիշ թիվ կա, որոնցից յուրաքանչյուրի թվանշանների արտադրյալը պարզ թիվ է:

- 1) 0                              2) 9                              3) 12                              4) 14

10. Գտնել այն եռանիշ թվերի քանակը, որոնցից յուրաքանչյուրը 13-ի բաժանելիս մնացորդում ստացվում է 9:

- 1) 67                              2) 68                              3) 69                              4) 70

11. Միքայելը միևնույն թիվը բաժանում է 5-ի և 9-ի, այնուհետև ստացված մնացորդները բազմապատկում: Նշվածներից ո՞ր թիվը նա կարող է ստանալ:

- 1) 25                      2) 27                      3) 30                      4) 32

12. Ուղղաթիռը 1 վայրկյանում անցնում է 45 մ: Ինչքա՞ն ժամանակում այդ ուղղաթիռը կանցնի 270 կմ:

- 1) 1 ժամ 40 րոպե                      2) 1 ժամ 20 րոպե  
3) 1 ժամ 30 րոպե                      4) այլ պատասխան

13. Պահակը մեկ օր աշխատում է, հաջորդ երկու օրը հանգստանում: Առաջին անգամ երբ նա գնաց աշխատանքի երկուշաբթի էր: Շաբաթվա ի՞նչ օր էր պահակի 25-րդ աշխատանքային օրը:

- 1) երկուշաբթի                      2) երեքշաբթի                      3) չորեքշաբթի                      4) հինգշաբթի

14. Ուղղի վրա նշված են մի քանի կետեր: Ուղղի վրա առաջացած այն հատվածների քանակը, որոնց ծայրակետերը նշված կետերն են, 30-ից շատ է, 40-ից քիչ: Քանի՞ կետ է նշված ուղղի վրա:

- 1) 7                      2) 8                      3) 9                      4) 10

15. Անին որոշեց ծննդյան օրը իր բոլոր 32 համադասարանցիներին կոնֆետ հյուրասիրել: Նա հաշվեց, որ եթե աղջիկներից յուրաքանչյուրին տա 4 կոնֆետ, իսկ տղաներից յուրաքանչյուրին՝ 3 կոնֆետ, ապա պետք է գնի 115 կոնֆետ: Քանի՞ աղջիկ է սովորում այդ դասարանում:

- 1) 17                      2) 18                      3) 19                      4) 20

16. Տասը ափսեում մրգեր են դրված: Ցանկացած երկու ափսեում եղած մրգերի քանակը 6-ից շատ է: Ամենաքիչը քանի՞ միրգ կարող է լինել բոլոր ափսեներում միասին:

17. Լևոնի սլաքավոր ժամացույցով ժամը 8 անց է 38 րոպե: Դավիթի սլաքավոր ժամացույցի ժամ ցույց տվող սլաքը գտնվում է այն դիրքում, որ դիրքում գտնում է Լևոնի րոպե ցույց տվող սլաքը: Դավիթի ժամացույցը քանի՞ րոպեով է հետ Լևոնի ժամացույցից:

18. Երբ Նարեն այնքան տարեկան էր, որքան Մանեն հիմա, Մանեի տարիքը 2 անգամ փոքր էր Նարեի տարիքից: Նարեն այժմ 24 տարեկան է: Քանի՞ տարեկան է Մանեն:

19. Արմենը վերցրեց 114 միատեսակ քառակուսի և դրանք կողք կողքի դնելով՝ ստացավ ուղղանկյուն: Ամենաշատը քանի՞ տարբեր պարագծերով ուղղանկյուն կարող է նա ստանալ:

20. Կլոր սեղանի շուրջ դրված աթոռները մի ուղղությամբ հերթով համարակալված են՝ սկսած 1-ից: Պարզվում է, որ 16 և 37 համարներով աթոռների միջև կա այնքան աթոռ, ինչքան 45 և 6 համարներով աթոռների միջև: Քանի՞ աթոռ է դրված կլոր սեղանի շուրջ: